Գուրգեն Մահարի

Ես փոքր էի դեռ, փոքր էի ես

Ես փոքր էի դեռ, փոքր էի ես,
Աչքեր ունէի բարի ու մեղմ,
Արտերի ճամբին տեսայ ես քե,
Դուն այնքան աղջիկ, այնքան անմեղ:

Առաջին հանդիպում… եւ ինձ թւաց,
Որ նման ես դու ճերմակ գառի,
Ուզեցի քեզ հետ դաշտը գնալ
Ու հասնել ճերմակ բարդի ծառին:

Ուզեցի, բայց դու գնացիր տուն,
Ու երազ դարձար, դարձար վերյուշ,
Փուեց գորշագոյն մի իրիկուն,
Մի Բողար հաչեց հեռից հեռու:

Յետոյ գիշերը, անհանգիստ քուն,
Լուսնկայ դաշտեր, դունչը գառիս,
Ես գնում էի մեր դաշտերով,
Ես հասնում էի բարդի ծառին…